

Պսակի կէս արարողութիւնը վերջա-
նալէ յետոյ, ժամը 10ին Հարսնեւորք
Հարսն իմիասին, տասը չքեղ Լանտօ
կառքերով շոգենաւ գնացին, տասը
քառորդ անցած շոգենաւ ճամբայ ե-
լաւ գէպի Մագրի գիւղ:

Յիշեալ չքեղ հանգէսին մէջ կա-
նոնաւորութիւնը կը փայլէր, գողտր
և գեղեցիկ էր ամեն ինչ. այս առ-
թիւ շնորհաւորելով Հարսն ու փեսան,
մեր խնդակցութիւնը կը յայտնենք
Կիւլլապեան և Սարրաֆեան գեր-
դաստաններուն:

ԻԶՄԻՐԻ ՀԱՆՐԱՊԻՐՆ

ԱՌ ԱԶԳ. ԿԵԴՐ. ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

Նախորդ թիւին

Սակայն ի վերջոյ հետզհետէ ան-
գամներու (Ս. Առաջնորդին խոտոր ըն-
թացքէն դժգոհելով) հրաժարմամբ
բողոքովին կազմալուծուած է և ամբող-
ջակի վերնորոշուած՝ ոչ թէ նորոգ քուէ-
արկութեամբ, այլ առաջին քուէար-
կութեան միջոցին առ հասարակ ամեն
քուէ շահող ընտրեալներու հետեւոր-
Ազգ. Սահմանադրութեան 69րդ յօդ-
ուածին, որ վախճանեալ կամ հրա-
ժարեալ երեսփոխաններու յաջորդներ
կը պահանջէ նորոգ ընտրութեամբ ու-
րոշել: Նկատելով թէ՛ Գեր. մելքիսե-
դեկ զլանալով ընտրել տալ Գաւառ.
Ժողով մը եօթն-ութ տարի գործած
է յիշեալ ապօրէն ժողովոյ և անկէ
բղխած ժողովներու և խորհուրդնե-
րու միջոցաւ: Նկատելով թէ՛ այսու
նոյն միջոցին գործուած բոլոր զանցա-
ռութիւններու և զեղծումներու պատ-
ճառ և հեղինակ եղած է, որոնք զըժ-
բաղդաբար անհամար եղած են և այս
եւս բնական է քանի որ գործողներն
ազգին ճշմարիտ ներկայացուցիչներ լի-
նելու բնութիւնն չունին: Նկատելով
թէ՛ վերջապէս յիշեալ Գաւառ. Ժո-
ղով երբ ինքնին կը ցրուի լիովին՝ ա-
նոր տեղ նոր մը կ'ընտրուի ոչ նուազ
ապօրէն քան զայն, և իրաւի ինչ
անուն տալ այնպիսի ժողովի մը, որու
ընտրութեան մասնակցած են՝ քաղքիս
շուրջ 800 ընտրողներէն մի միայն 90
հոգի: Նկատելով թէ՛ սոյն ընտրու-
թեան միջոցին ժողովուրդի ցոյց տը-

ուած ձեռնպահութիւն եթէ մէկ կող-
մէն արդիւնք է իր առ Ս. Առաջնորդն
ունեցած ցուրտ զգացումներու, միւս
կողմէն ալ յառաջ եկած է այն տնօ-
րինութենէն որով մէկ կամ աւելի
տարուան իրենց ազգային տուրքը չը
վճարած ընտրողներ ընտրութեան ի-
րաւունքէն կը զրկուին, և այս՝ գըլ-
խաւորաբար շնորհիւ Ս. Առաջնորդի և
հակառակ ընտրողական ժողովոյ ան-
գամոց ոմանց պնդմանց և առարկու-
թեանց: Նկատելով թէ՛ այս տնօրի-
նութիւնն ոչ թէ ելմտական հաշիւնե-
րով հնարուած է. այլ բուն իսկ ընտ-
րութեան իրաւունքը սեղմելու փա-
փագաւ. ըստ որում գրամական ա-
ւելի անձուկ և համեստ վիճակ մ' ու-
նեցող տեղեր անգամ չեն դիմած այդ
միջոցի, զոր միանգամայն Սահմանա-
դրութեան և ոչ մի օրէնք կը թոյլա-
տրէ: Նկատելով թէ՛ այն ապօրէն
ժողով թէեւ ճիշդ չորս ամիս առաջ
մասամբ ընտրուած այլ հազիւ հազ
կրցած է նիստ մ' ընել, մինչ կրկնակի
նիստերու անհրաժեշտ հարկ կայ թէ՛
կարեւոր խնդիրներու տնօրինութեան
և թէ վարչական ժողովներու ու խոր-
մար, որոնք արդէն ի վաղուց իրենց
պայմանաժամ լրացուցած են և կաղն
ի կաղն կ'ընթանան: Նկատելով թէ
յաճախ վարչական ժողովներ կամ խոր-
հուրդներ կը ցրուին, կը լուծուին,
սակայն անոնց տեղ՝ երկարատեւ Ս.
Առաջնորդն անփոյթ կը մնայ նորեր
ընտրել տալու, այսպէս երկու տարիէ
ի վեր չունինք Տնտեսական Խորհուրդ-
որու պաշտօնն յանձնուած է Քաղ. Ժո-
ղովին՝ հակառակ օրէնքի:

Նկատելով թէ՛ Գեր. Մելքիսեդեկ
հակասահմանադրական այս ամեն ակ-
ներեւ և ուրիշ անթիւ մոռցուած ու
գաղտագողի օրինազանցութիւններով
մէկ կողմէ ժողովրդին ձայնը խեղդած
և անոր իրաւունքը բռնաբարած, միւս
կողմէն ալ թէ՛ եկեղեցւոյ և թէ՛ ազ-
գային հաստատութիւններու և շա-
հերու մեծ քննաքնն հասուցած է.
այսպէս իր օրով Ազգ. Վարժարաններ
փոխանակ ժամանակիս պահանջմանց
և տեղւոյս զարգացեալ վիճակիս հա-
մապատասխանող դիրք մը ստանալու՝
տարտամ վիճակի մը մէջ մնացած են,
թէ և առատ հասոյթներ յատկաց-

ուած են անոնց և մինչեւ անգամ
դպրոցական թոշակ մ' ալ հաստատ-
ուած է՝ աշակերտաց ծնողներէն հա-
ւաքելի և ցարդ մեզ անծանօթ, ըստ
որում հոն չէ թէ արժանաւոր ուսու-
ցիչներ կը պահուին, այլ աւելի ա-
նոնք, որոնք լրագրաց մէջ իրեն նը-
պաստաւոր յօդուածներ կը գրեն,
մինչ անոնց տնօրինութիւնն ալ յանձ-
նուած է Մամուրեանի մը՝ որ հրա-
պարակի վրայ Ս. Առաջնորդն ամեն
ճգամբ պաշտպանելով կը կարծէ թէ
տեսչական բոլոր պարտաւորութիւն-
ները լրացուցած է. տարիներ առաջ
գոյացած ազգային արկղի մեծագու-
մար պարտք մը, թէ և Ս. Առաջնոր-
դին քաղաքս գալէն առաջ իմաստուն
և խնայողական կարգադրութիւննե-
րով տարուէ տարի կը նուազի, սա-
կայն իր պաշտօնավարութեան ժամա-
նակ նորէն կսկսի բարձրանալ և գրե-
թէ չորս հազար ոսկիէն եօթն հազա-
րի կը հասնի, մինչ նոյն միջոցին ար-
տաքոյ կարգի հասոյթներ ալ միշտ
անպակաս կը լինին. ազգին սեպհա-
կանութիւնն եղած կալուածներ կը
վաճառուին առանց Պատկ. Վարչու-
լթեանը ժանուցուելու ինչպէս որ օ-
րէնք է. ազգային կալուածներ կը
փլուին, կ'աւերուին, բայց անոնց նո-
րոգութեան հոգ չտարուի, թէ և
կալուածոց նորոգութեան անուամբ
ստուար գումարներ կը նշանակուին
տարեկան հաշուեցոյցներու մէջ:

Նկատելով թէ՛ Գեր. Մելքիսեդեկ
ինչ ինչ բնաւորութիւններով ստեպ ժո-
ղովրդին հակակրօնութիւնն և զայրոյթը
կը շարժէ. օրինակի համար այն ինչ
անհուն ժողովրդականութիւն վայելող
երջանկալիշատակ Ներսէս Սրբազանի
հոգեհանգստի պաշտօնը փառաւոր
կերպով կատարելու ընդհանուր փա-
փաք մը կ'զգացուի՝ չը սոսկար այն-
քան պարզութեամբ կատարել, որ ա-
մենուն և օտարներու իսկ զարմանք
զգուանք կ'ազդէ. երբ վեհ. Մակար
կաթողիկոսի օրհնածիր կոնդակը կը
հասնի և եկեղեցիներու մէջ կը կար-
դացուի՝ նոյն օրն եկեղեցի անգամ
չ'իջներ՝ անշուշտ այն ոգւոյ, որով
Շահպաղլեանի ծանօթ խնդիրը երկ-
նած է. երբ Հռիփսիմեանց վարժա-
րանի վերաշինութեան համար հրամա-
նագիր հարկ կը լինի՝ տհաճութիւն

կ'զգայ Պատ. Վարչութեանդ դիմելու՝ հակառակ Սահմանադրութեան հրահանգի Գ. հատուածին 12րդ յօդուածին և կը դիմէ մասնաւորի մը, որոյ ջանքեր երբ երկար ատեն ապարդիւն կը մնան, երբ նոյն միջոցին վարժարանը կ'իսափուլ՝ աշակերտութիւնը այլուր կը յաճախեն և նիւթական զգալի փնաս մը կը պատճառի, այն ատեն կը զիջանի ստանալ նոյն հրամանագիր Պատ. Վարչութեանդ միջոցաւ. երբ Հայ ազգին անդրանիկ թերթը դաւով մը կը խափանուի, դաւ մը՝ որու մէջ իր մեղսակցութիւնն անկասկած կը փայլի, գէթ իւր վրայ ծանրացող կասկածը փարատելու համար՝ նոյն թերթը վերաբանալ աշխատելու վեհանձնութիւնը չ'ունենար. երբ մի ազգային աղքատ կամ տառապեալ կուզէ իրեն ներկայիլ և իր ցաւը կամ պէտքն յայտնել՝ իսկոյն կ'արդիւնուի իւր սպասաւորներէն. ազգին բոլոր բարձրաստիճան պաշտօնեաներու մէջ՝ թէ՛ կրօնական և թէ՛ աշխարհական՝ չը կայ մէկն, որու գործերը չը քննադատէ, ի մեծ բարոյական լքում ժողովրդեան. կան նաեւ աւելի դայթակղական պարագայներ, որոնք նայելով իր եպիսկոպոսական բարձր աստիճանին գանց կ'ընենք յիշատակել:

Նկատելով թէ՛ ազգային եռանդ և գործելու աշխոյժ բնաւ չունի, բայց որում իր բոլոր պաշտօնավարութեան մէջ և ոչ մի ազգօգուտ խորհուրդ չղացած և զայն իրագործած է, մինչ գործերն ալ իրենց բաղդին կամ բռնական ընթացքին թողած է, եթէ նկատուի մը զանոնք ևս չէ խոտորած. տասն տարի Թուրքիոյ մի կարեւոր վայրը կը գտնուի և տաճկերէն բառ մ'անգամ չտորվիր, երեւակայեցէ՛ք թէ ինչպէս կրնայ ազգայնոց շահերը պաշտպանել բարեխնամ կառավարութեան առջեւ. տէրութեան օրինաց ոչ տեղեակ է և ոչ ալ պիտի լինի, ուստի և ոչ մի փոքր ինչ կ'ընեն պարագայի մէջ երես ճերմկուցած է:

(Ծանոթութիւն)

ՊԱՏԿԱՆԵԱՆ ԵՒ ԱՐԵՒԵԼՔ

Ինչպէս յայտնի է, Արեւելքի տղայ խմբագիրներն դեռ Պատկանեան Պօլիս

չեկած, իւրեանց մեծանուն բանաստեղծին նկատմամբ հրատարակութիւններ սկսան. թէ Պատկանեան Պօլիս գալու համար ճամբայ ելեր է, թէ չգիտեմ ուր հասէր է, թէ երկու անգամ հաղացեր երեք անգամ գլուխը քերեր է, շոգենաւ մտեր է, ճամբան է, կուգայ կոր, հասաւ, նաւակ նստեցաւ. կեցէ՛ք՝ պէ մարդիկ, քիչ մը շունջ առնենք, ինչ՝ կըլլաք կոր ո՞վ է եկողը Մէսիան. . . ինչ՝ կըսես դու, մեծանուն բանաստեղծ, անստղիտ հանճար, ամենաբարձր տաղանդ, հայոց երեւելի միակ պուէտ, դեռ որ մէկն ըսեմ, այնչափ բարձրացուցին կիսաստուածացուցին այս մարդը՝ որ երկու Պատրիարքունք իսկ խաբուելով պատուեցին զնա:

Պարոն Ռափայել Պատկանեան իզմիր այցելելն Պօլիս մոռնալով, վերջապէս ելաւ գնաց, մենք ալ ուրախացանք որ ալ փոքր ինչ հանդարտեցանք. սակայն երկուշաբթի օրուան Արեւելքի մէջ առանց հարկի դարձեալ յիշուած էր՝ իւրեանց շաղփափ հրատարակութիւններով գտած պատուաւոր ընդունելութիւններն. ուստի այդ մարդուն բանաստեղծ ըլլալով հանդերձ ինչ արժանիքի տէր ըլլալը հասկցնելու համար դարձեալ կարտատեղեք Պատկանեանի ընդհանուր Հայ խմբագրաց և հեղինակներու դէմ՝ Արձագանքի մէջ հրատարակած յօդուածը՝ զոր Արեւելքի տխմար խմբագրութիւնը իւր կողմէն առանց դիտողութիւն մը ընելու արտատպած էր:

«Մի բան ցաւելով նկատել եմ ես (թէ և ոչ այս վերը յիշած երեք պարբերագրութիւնների մէջ) այսինքն Մշակ, Արձագանք և Աղբիւր. (թերթերը), որ այժմուս Հայ հեղինակները աւելի և աւելի նրբացնում են իրանց ճաշակը «Շանթաթ» կոչուած անգոսնելի արուեստով: Ուրիշ բան էլ նկատել եմ, որ մեր թերթերը անզգալի կերպով կոյանոց են դառնում ի շնորհս լրագրական խմբագիրներին անբարոյականութեան և նոցա գաւառական թղթակիցների «Գիծուխեղօքութեամբ» . . . Յաւալի՛ երեւոյթ:

Բայց միտարկենք: Արեւակի պայծառ և բարերար ճառագայթներից շուտ կը ցամաքին գարշահոտ ճահիճները, և նոցա մէջ խլրտող զաղ-

րելի սողունները թաւալ թաւալ կուգան և . . . կը սաստկոտեն:

Մեծանունը շատ Մեծ է այսպիսի մարդուն համար: Եթէ Պատկանեանի տաղանդը այդ աստիճան բարձրացնէր մեծցնէր, Ալիշաններու, Բագրատունիներու, Խորեններու՝ ինչ տիտղոս տանք, և այս այնպիսի մարդու մը համար, որ զինքը՝ և ոչ տեղ մը չը տեսած հիւրասիրութիւններով մասմը ազգայնոց պատուած միջոցին, ընդհանուր գրականութեան դէմ այսօրինակ կոչաւ և անարգ լեզու մը գործածէ. այս է ձեր մեծանուն բանաստեղծը, այս է ձեր երեւելի Պուէտը, Ազգ. Հիւանդանոցն այցելած միջոցին, լուսահոգի Պէզճեան Յարութիւն Ամիրայի կենդանագիր պատկերը աեսնելով, կը հարցնէ թէ ո՞վ է—կըսեն թէ մեծանուն բարերար Պէզճեան Յարութիւն Ամիրային պատկերն է—չեմ յիշեր այդ մարդը կը պատասխանէ—Այո՛ է ձեր՝ Հայ գրականութեան բազմամեայ ծերունի աշխատաւոր ազգասէր գրագետը. եթէ աշխարհահռչակ Պէզճեանի նման ազգային բարերար մը չը ճանչնար և չը յիշեր, հապա գո՞վ կը լիէ այդ Հայերէն լեզուն չարագործութիւն հասող ձեր մեծանուն բանաստեղծը:

Բերայի նորաշէն Արուեստանոցն պտրտած միջոցին քահանայից յատկացեալ մաքուր խուցերը տեսնալով. (պէտք է գիտնալ որ այդ մարդը մաքրութիւնն ինչ է, չը գիտեր), կը հարցնէ թէ այս խուցերը ինչ բանի յատկացեալ է—կը պատասխանեն որ պատարագիչ քահանայի և այլ քահանաներու խուցերն են—ինչ՝ պէտք է քահանաներ գիշերը ժամը պառկին, թող երթան քառսուն փարա տան խանը պառկին ըսած է. այս է ձեր բարոյագէտ և տաղանդաւոր գիտնականը: Յանուն աղգին այդ օրինակ շաղփափ և պարծուկ հրատարակութիւններն ամօթ է, ազգին անպատուութիւն է, դուք ձեր շահուն համար աքաղաղի մը առջեւ գարիի տեղ մարգրիտ կը նետէք եղեր, նետեցէք, բայց ընդհանուր ազգին անունը մի խառնէք և, եթէ կարիլի է այսուհետեւ աժեմին չաժեմին, քիչմը խուսկը խնայեցէք:

ԵՐԿՈՒ ԿԱՆԱՆՑ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

(Նախորդ թիւէն)

Արդարեւ Աօֆիկ հանրմը գնաց վերոյիշեալ պօստանին մէջ, և փողօցին կողմի դուռը զարկաւ:

—Ո՞վ է ան,

—Պացէք:

Դուռը բացուելով մեր Սօֆիկ հանրմը խիստ դէմքով մը ներս մտաւ ըսելով,

—Պարեւ,

—Աստուծոյ բարին,

—Աս տունին մենծը վո՞վ է,

—Ես եմ, ինչ՞ կուզէք,

—Ճանակ է նէ, քիչ մը վար էկուր քեզի ըսելիք ունիմ,

—Շատ աղէկ, ըսելով տան տիկինը վար իջաւ, թէ և բոլորովին զարմացած այս՞նչ անակնկալ այցելունն ձեւերէն:

—Քա ճանրմ սա ծեր ախճիկներուն վախիթով մէյմէկ երկի չը կըտնաք քիտեղեքնին տեղաւորութիւն տէ, ամենուն ճահիլը կուլիս չը հանեն:

—Այդ ինչ՞ խօսք է, տիկին՝ դուք սխալ եկած ըլլալու էք, ուրիշ տեղ

—Քա նասըլ ուրիշ տեղ, մեղայ չիտեմ զահէր, հոս տեղը Գալինիկ անունով ախճիկ մը չիկայ:

—Թէպէտե ասիկա ըսած տունդ է, և այս տեղ այդ անունով և ուրիշ աղջիկ մը ևս կայ, բայց բոլորովին կը կը սխալիք ըսելով թէ՛ անոնք այդ տեսակ անբարոյական վարմանց մէջ գտնուած ըլլան, քանի որ մեր զաւակներն ուսեալ, և խիստ բարեկիրթ օրիորդներ են:

—Աս ըսած լախըրտըներուդ ամենն ալ չը հասկըցայ ամա, աղէկ կիտեմ քի իմ փընտըռած տունս ասիկայ է, հէմ Արուսթիս ինք թարիֆ ըրաւ, ամա՛ ըսաւ քի չերթաս տէ սախըն պան ըսես՝ ետկը մենծ սոյէն կըռիւ կընեմ տէյի, ամա ես կէնէ մըտիկ չըրի անկէ կաղտուկ էկայ, տարի մընէ քի սա ետէվի տուննէն կը տեսնուին եղեր, տուք ինչիս մարնէք քի ծեր ախճիկները ինչ՞ կընեն, ինչ՞ չեն ըներ, որին՞ հեն կը տեսնուին չիյաէք. ամեն գիշեր մուլթին տուռը կ'եղան եղեր, իմին մախսըմըս ալ

կուգայ իրարու հետ կը տեսնուին եղեր, հէմ առ Գալինիկ է՞ ինչ է, կըսէ եղեր քի էյէր ինծի չառնես նէ, կը խենդենամ կը մեռնիմ, ինքըզինքըս հորը կը նետեմ տէյի, առ ինչիս՞ թէրպիյէլի, կիտեալ ախճիկնէ քի, առ լախըրտըները կընէ կոր իմ տասնըու թը տարու ետվրուիս, չամըչնա՞ր, չը խըփնիր, անիկա տահա կարգուել կիտէ՞ զէհէր, թէմիլ փաք զէնահաթ, սիւսիւ ճահիլ է տէյի նէ, զարնուէր է, անկըմահի զարնուէր հէմէն տէ, չոճուխիս տեարթմիշ չընէր, չիմանայի նէ ինք խօճա ախճիկ տըղուս կըլօխը պիտի ելլար չըսե՞ս, հէմ անիկա ամիսը տահա քանի՞ խուրուշ կառնէ քի փիւ թիւն թիւլի խուլթիով փուտուաներ ուռուփլը չէքէրնէր, էլտիվէններ, տահա չիյտեմ ինչ սուղ պաներ պերել կուտան եղեր, կը վա՞յլէ խօճաման զէնկինի մը ախճըկանը, աս ինչ՞ ըռեղիւլթին է:

—Ալ լրբութեան չափը անցուցիր դուն տիկին, կորսուէ դուրս ել ասկէ, ապա թէ ոչ հիմա փայտով դուրս հանել կուտամ զքեզ, այդ ինչ գարսի համարձակութիւն է որ կը հանդգնիս մեղ դէմ այդ չափ սոսկալի զըպարտութիւններ յարուցանելով անպատուել զմեզ, նորէն կըսեմ՝ կորսուէ գնա ասկեց, եթէ ոչ հիմա ոստիկան բերել կուտամ:

—Քա ինչ՞ ըսիր, հէ՞, կորսուիմ մի՞ ասկէց փատով մի՞ դուրս կը հանես, սըլոր կերած ապուրը նայէ, հէմ սուշու հէմ կիւճիլ, տուն ինծի կիտեմ, իմին անունս Սօֆիկ է, հիմա իշտար ճամ չէրչիլէ ունիք նէ վար կառնեմ, զէհէր կուզէիք քի, սուսիկ փուսիկ թող տայի տէ, չոճուխըս խափաթմիշ ընէիք հա՞, էս հիմա կերթամ ամա, չիտակ պատվիրաքարանը պիտի երթամ, իշտէ նայէ սա մէքթուպը կը տեսնաս՝ կոր, Արուսթիս ճէպէն առի, մէջի իմզան Գալինիկ . . . կըռած է, մէյէր կաղընտին իրիկունը տուէր է, (այս ըսելով կուրծքէն ոսկեզօծ պահարանով նամակ մը հանելով ցուցուց, նոյն պահուն որ տան մէջ գտնուողներն՝ վարի աղմուկը լսելով հետզհետէ և նոյն իսկ օրիորդներն ալ եկած գաղտնաբար մտիկ կընէին, նամակին խօսքն ըսելուն պէս

գոյներնին նետեց, և քովերնին գըտնուող փոքրիկ օրիորդը մը խրատեցին որպէսզի երթայ Սօֆիկ հանրմին ձեռքէն նամակը յափշտակէ, արդարեւ փոքրիկ օրիորդը ամենայն ճարտարութեամբ կատարեց իւր դերն՝ յափշտակելով նամակը, սա տարբերութեամբ միայն թէ, փոխանակ զայն օրիորդներուն տալու, ուղղակի բերաւ տիկնոջ ձեռքն յանձնեց, որ արդէն նոյն մտքով կը յառաջանար դէպի նա, տիկինը անմիջապէս բացաւ նամակն ստուգելու համար թէ, իրօք ստորագրութիւն կար, և երբ համազուեցաւ թէ ճիշտ իւր ախջկան ստորագրութիւնն և միանգամայն գիրն էր շատ զարմացաւ, իսկ միւս կողմէն Սօֆիկ հանրմը՝ տեսնելով որ իւր ձեռքէն յափշտակուած էր նամակն, և ալ յոյս չունէր վերստանալու զայն, փոխանակ աւելի կոշտութեամբ խօսելու ստիպուեցաւ մեղմաբար խնդրել, որ տիկինը բարեհաճի կարգալ նորա պարունակութիւնը:

—Շատ լաւ պատասխանելով սկսեց կարգալ նամակը:

Երբ բոլորովին կարգաց լմնցուց նամակը, Սօֆիկ հանրմը ըսաւ:

—Եյտեսար հիմայ, ըսածիս խանմիշ եղար, եաղըլը եմ եղեր, իմզան ճաշար:

—Ճշմարտն ըսելով այնչափ չուարած եմ որ չեմ գիտեր թէ՛ ինչ ըսեմ, բայց ապահով եղիր խիստ աղէկ կ'արդարութիւն մը պիտի ընեմ, սակայն դուն ալ քու մասիդ աշխատէ որ տըղադ այլ ևս այս կողմէն չ'անցնի:

—Առտունները չարչի երթալնիքէն ետեւէն պիտի երթամ, իրիկուններն ալ ճանքան պիտի պէքէյմ:

—Եթէ նորէն ասկէց անցնի գիտցած եղիր թէ յանցաւոր է:

—Թող չիտամ պիտի:

—Տղուդ արհեստը ինչ է:

—Խալբախներուն կըլօխը պասմաճի է, հէմ անանկ իշկիւզար է քի, վարպետին փէք աշքնէ:

Շատ աղեկ. ալ անհող եղիր մեր աղջիկը չը պիտի առնէ, երթաս բարով, ըսելով Սօֆիկ հանրմը ճանքեց:

Ռ. Յ. Դ.

ըստ երևիւմէյն :

—Էֆիմի , պու չիւնքեար իսկէ-
լէսինի ներտէն չըգարտընը :

—Պէն չըգարտընը , Գաթիկո
տուտու տէտի քի բազար կիւնլէրի
չիւնքեար իսկէլէսինէ վարօր իշլէսօր
ըմը , պէնտէ էվէթ տէտիմ իսէ եա-
ընա պիր բարթիթ եաբալըմ տէտի-
լէր :

—Փիլիճլի մագարնայը ներտէն չը-
գարտըն տիւզ պիր էթլի լաբա եաբա-
ընալը վէսսէլամ :

—Եա սէն փիլիճլի մագարնա ազ
կէլիր պիր տէ բաթլիճան պէօրէյի
եաբալըմ տէյօրուտըն նէ . . :

—Օնլարըն էօնիւնտէ հէլպէթ էօյ-
լէ տէեհէհէիմ . սէն , պանա գալըրսա
եալանտան հաստա օլսան ֆէնա օլ-
մաղ :

—Գա նիչին հաստա օլաճաղըմ ,
սէօլ վէրտիք նէ , այըպ տըր :

—Աեղպ տըր ամա պիր լիրա մէ-
սարիֆ եթիլմէզ հապէրին վարձը :

—Իքի գուրուչ տըր վարօր , նէրէ-
հէ պիր լիրա կիտէհէք :

—Իքի գուրուչ ամա չիմտի պաք ,
պէն սէն իքի , Անիկ իւշ , Թէրէզիկ ,
աէօրթ , Միշէլ պէշ իստէր իստէմէզ
ուշաղը տա ալաճաղը , ալթո . եհու-
պէսէ 44 գուրուչ օ :

—Աման Գիրգորիկ աղա , պէնիմ
ինճէ հիսապլարա պաղըմ եօգ՝ . . :

—Էյլէնճէ օլուրսա պաղըն իչին-
տէն չըբմաղ :

—Գա ճանըմ օրտա տէյէ իտին քի
մանիմ վար կէլէմէմ . հէմ էվտէ գըզ-
լարըն էօնիւնտէ պէօյլէ լազըրտըլար
էթմէ նաֆիլէ եէրտէ եիւրէքլէրի օյ-
նար :

—Եօք ճանըմ էթմէմ , գօ պիր իքի
լիրա տա պէօյլէ կիթսին :

(Տէլաֆ)

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ Ք

Բարեկամ քիչ շատ ինճնէ աւելի
խելք ունիս , քեզի հարցում մը
ունիմ :

—Ըսէ տեսնեմ :

—Սա մեր Ողգին մէջ նշանաւոր և
պիտանի անձ մը մեռնելու որ ըլլայ
ինչու՞ ողջ եղած ատեն նորա արժա-

նիքը չեն ճանչցներ ժողովրդեան , և
միանգամայն յարգը չեն գիտնար , և
մեռնելէն վերջը կ'ելլան լրագրաց մէջ
խոշոր յօդուածներ գրելով՝ գովեստ-
ներ կը տեղացնեն :

—Ձե՞ս գիտեր բարեկամ «գնայ
մեռիւր , եկուր սիրեմին առածը :

~ ~ ~

Լուսեա տուտու լսեցի քի աս տա-
րի ալ Արմաշ պիտի երթաս , իրա՞ն է :

—Հապա քուրուկ , աղջիկանս հա-
մար պիտի երթամ :

—Ինչ կայ խեր ըլլայ , անցած
տարի աղջիկանդ խսմէթը բացուելու
համար ելար գացիր , փառք Աստու-
ծոյ աղէկ տեղ մը դրախտամարդ ու-
ղեցին , նշանեցիր լմնցալ :

—Ինչ կըսէս քուրուկ , անունը
դրախտամ չիկայ ամմա , մանչուն կող-
մէն ճէհէզին համար . սա կուզէնք
նա կուզենք վերջը չ'եկալ , Աստուած
սիրտերնուն խըճմտանք մը տալու հա-
մար ուխտ ըրի աս Խաչին ալ պիտի
երթամ :

—Վույ չըսէս երկու աչքը սիրեմ
իմ փեսիս քի , մեղնէ հինգ ոսկի դը-
րախտա առնելուն համար , աղջիկս
մուհաճիր ֆիստանով մը հարս խրկե-
ռի նէ . ուրիշիւն չ'ըլլալ :

~ ~ ~

—Միւսիւ Լեոն , ինչ են այդ գե-
ղեցիկ ոսկեղոծեալ մեծ դրքերն :

—Ձեք գիտեր բարեկամ , այսօր
մեր դպրոցի մրցանակաբաշխութեան
հանդէսը կատարուեցալ , և իմ տը-
ուած բարձր քննութենացս արդիւնքն
է ասոնք :

—Կեցցէս բարեկամ , մանաւանդ
կեցցէ քու հայրիկդ որ ձեր վար-
ժարանին հոգաբարձութեան բարձր
անդամակցութեան մէջ կը գտնուի :

~ ~ ~

Թագուկ տուտու սապահ հայրը .
նէ տիր օ կինէ սէնի պիր աճաեիպ
կէօրիւեօրում :

—Աման սուս օլ գըզ գարտաշ . շու
պիղիմ միւսիւ Անթուանըն էլինտէն
չէքտիղիմ , գայըր այգընը սոյ սընըր-
լարա տօգուհաճաք պիր եօլ տըր
թութմուշ կիտէսօր :

—Քա աման կինէ , աճապա նէ
պօշ չէյլէր իլէ քէնտինի սըզըեօրսուն :

—Նասըլ պօշ վէրթին , պու հէր

ազաւմ տըր պագալ թիւքեանը թէր-
թիպի տիր տէյիպ կիտէեօրում :

—Պագալ թիւքեանը թէրթիպի
նէ տիր :

—Պէյօղլուճուզըն չիմտիքի սօն
մօտասը օլտու , էսկիտէն տօղրու եօլ-
տաքի պէօեիւք կաղինօլարտա օթու-
րուրլար ըտը , չիմտի պիր թագըմ
պագալ թիւքեանլարընտա օթուրու-
եօրլար ըագը իշմէհէ , պիղիմքի ագ-
չամլարը տօտօղրու չարչրտան կէլիր ,
պիրտէ նէ պագարսըն—հա Թագուկ
լիմօնը , եախօտ թուզու ունութտըմ
տէեհէք , պիր մահանա պուլուր կի-
տէր պագալա , քա կէրի տէօնտիւ-
ղինտէ հանի մօմ կիպի տօղրու եիւ-
րիւեհէն միւսիւ Անթուան , էյ գայըր
տաեանաճաք հալիմ գալմաեօր վէր-
թին սուս օլ մութլու սանա քի էվ-
լի տէյիլսին :

—Եօք՝ աման , էվլէնիպ տէ նէ
եաբաճաղըմ , չիմտիքի վագըթ իչին
գօրթէզանլըգտան պաշկա սիկուրօ պիր
էօմիւր կէօրէմէեօրում :

ԼՕԳԱՆԹԱՅԸ ՈՒՄՈՒՄԻ

Պէյօղլու տօղրու եօլունտա հա-
լէպ չարչրուր ն . 9 :

Միւճէտտէտէն գիւշատ օլունմուշ
իշպու լօգանթատա թաամլարըն նէ-
ֆասէթինէ ֆէվթէլատէ տիգգաթ օ-
լունտըղընտան , կիտէն միւշթէրիլէր
հէր հալտէ խօշնուտ իտիլմէքտէ տիր-
լէր :

Թաամլարըն նէֆասէթ վէ նէվլէրի
խուսուսընտա սայիր միւթէպէր լօ-
գանթալարտան տահա իյի վէ հէվէ-
նիյէթճէ տախի ումումա սուհուլէթլի
ֆիյաթլար վաղ օլընաճաղը , վէ արդու
իտէնլէրին խանէլէրինէ՝ իսթէնիլէն
վագըթտա թաամ կէօնտէրիլէհէկի , վէ
իշպու Լօգանթայը Ումումիյէ ապօնէ
օլմաք իսթէյէնլէրէ մախսուս օլան ա-
պօնման ֆիյաթընը տախի զիյրտէ
տէրճ ուպէյան իտէրիլ :

Պիր չօրպա , պիր թապաք եէմէք ,
եարըմ թաթլը վէ պիր չիչէ չարապ
էքմէյիլէ 5 դուրուշ :

Խանէլէրէ կէօնտէրիլէհէք թաամ-
լար իչին այըրճա բազարլըք օլունըր :

ԵԱՆԿԸՆԱ ԳԱՐՁԸ ԱՆՕՆԻՍ ՄԻԿՈՒՐԹԱ ԳՈՒՄԲ-
 ՍՏԱՆՊՈԼ ՎԷ ՍՆԱՏՈԼՈՒ ԻԶԻՆ ՄԻԻՏԻՐ ՎԷ ԱՃԷՆԹԷ
 ԱԼԷԻՍԱՆԴԻ ԳՈՒՐՄՈՒԶԻ
LA ROUENNAISE

1837 ՏԷ ԹԷԷՄԻՍ ՕԼՈՒՆՄՈՒՇ
 ՍԷՐՄԱՅԷ 4000,000 ՖՐԱՆԲ
L'INDUSTRIELLE

ԵԱՆԿԸՆ ՇԻԻՊԵՍԻՆՏԷՆ 1,500,000 ՖՐԱՆԲ
 ԱՍԸԼ ՍԷՐՄԱՅԷ 5,000,000 »
 ԷՏԻՐՆԷ ՎԷ ՇԱՐԳԻ ԲՈՒՄԷԼԻ ԱՃԷՆԹԷ ՎԷ ՄԻԻՏԻՐԻ

Գ. ՏԵԼԻԳԱԹՕՍ

Եանդընտան մա'տա աղնամ վէ հայվանաթ տախի սիկուրթա օլընուր :
 Թավսիլի մալիւմաթ ալմագ իսթէյէնլէր Գալաթատա Գարանթի-
 նա սօդաղընտա Լէօն խանընտա 1, 2, 3, 4, նօմէրօլու իաարէխանէյէ
 Թէշլիֆ իթմէլէրի :

Մէգրիւր օտարադատա կէօզէ վէ ճէրաշլըլա միւթէպիգ Էնփաի ալէաթ-
 աւ Էօնփաթ մէվնուտ ալըր :
 Էնփաիլէ, Էօմուշաթ վէ սէրթ լաթիգտէն (գառնչուտան) մաաֆու
 մէվաաթը միւթթէլիֆէ, գաաթը պաղալը, Էնփաի յիթիկալար, Էնթ-
 Թիլը մաթիկալար, միգան իւլ հափա (պարամիթի), միգան իւլ հարաթէ
 (թէրմօնիթի) վէ Էյի ճէնա կէօղիլիքի պուրմադաա ալըր :
 Մ. Բօլ Յօյաճուան՝ Էնթ նիփ պըրաթլաթ վէ թամիթաթէ Էնփաի Գիթաթ
 Ելէ իճրա վէ ալէօնօնէ իսթի :

ԲՕԼ ՅՕԵՍԱՆԷՍ
 Եիւփեի Գալսլըլա, 80 Կուկրօսս
 ԿԷՕԶԷ ՎԷ ՃԷՐՄԱՆԸՆԱ ՄԻԻԹԱԼԻԳ
 ԱԼԷՍԱՐ ԹԻԻՃԱՄԸ

— 2 —

—Աւելորդ է հօն ղրկել ես կը որդեգրեմ
 զայն :

—Ներողութիւն խնդրելով հանդերձ՝ ե-
 րախան ձեզ չեմ կարող յանձնել, վերջը պա-
 տասխանատու կը մնամ :

Մաքուր հագուած պարոնը առանց պա-
 տասխանելու գրպանէն թղթապանակը հանե-
 լով մէջէն թերթ մը պատռեց և վրան հետեւ-
 եալը գրեց :

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայր

Պատահամբ այս առաւօտ Հիսար տիպի
 թաղը տան մը մէջ գտնուեցայ, ուր կին մը
 սպաննուած էր. այս կինը երկու ամսականի
 մօտ երախայ մը որք կը թողու, խնդրեմ գը-
 րաբերիս արտօնագիր մը չնորհեք, որ յիշեալ
 մանկիկը ինձ որդեգրեմ :

Մնամ Սրբազնութեանդ օրհնութիւնը
 խնդրելով ամենախոնարհ որդիդ :

ԱՊՐՕ

Այս թուղթը չորս ծալելէ յետոյ քեահ-
 եային յանձնելով քսաւ, անմիջապէս ասի պատ-
 ըրարքարան տար Ս. Պատրիարք Հօր թող տան
 նա արտօնագիր մը պիտի տայ, առ և շուտով
 ինձ բեր :

Գեահեան զարմանօք թուղթն առնելով
 մեկնեցաւ, ոստիկանապետը տան ամեն կողմը

— 3 —

տարուան համար կը վարձէ և երկու օր վերջը
 իւր կնոջն հետ գալով կը տեղաւորուին. դրաց-
 եաց հետ երբէք տեսակցութիւն չեն ընել ե-
 ղեր. ուստի ոչ ոք չըգիտէ թէ ով են, կամ
 ուստից կուգան : Ամիս մը վերջը, սպանելոյն
 ամուսինը գործի պատճառաւ օտար երկիր
 կերթայ և ահա այն ատեն, Սիսիան, այս
 խեղճ կնոջ եղբայրը տուն յաճախել կսկսի.
 քոյր և եղբայր շատ սիրով են եղեր իրարու
 հետ . . . :

—Ինչ գործ կընէ եղեր այդ Սիսիան ա-
 նուն մարդը, հարցուց մաքուր հագուած պա-
 րոնը :

—Մարդ մը չէ պարոն, այլ պատանի մը,
 տասն և վեց կամ առաւելն տասնևու-
 թը տարու հազիւ կայ. գալով արհեստին՝ ինչ
 գործ ընելը, ոչ ոք գիտէ : Արդ շարունակեց՝
 օտարականէ մը այսպէս ընդմիջուելուն փոքր
 ինչ սրթողած, երկու ամիս առաջ, ամուսի-
 նէն նամակ մը ստացեր է :

—Ուսկից գիտեն նամակ ստանալը :

—Հոս դրացի տնեցիները բան գործ չու-
 նին, օրն ի բուն զիրար կը լրտեսէն, յիշեալ
 նամակին մէջ գրուած է եղեր թէ, ամուսինը
 սոսկալի ժանտատենդէմը բռնուեր է և թէ
 բժիշկներն յորսերնին կտրել են իւր վիճակէն :
 Կինը կը պատրաստուի ամուսնոյն ետեւէն եր-

բուցատրութեամբ .	10	5
Բառգրքակ հայ. գաղ.	7	4
Նոր քերականութիւն հայե- րէն .	4	2
Ընթերցարան պատկերազարդ	21	2
Անկանոն բայեր գաղ. լեզ.	8	5
Ընդունելութիւնք » »	5	5
Նարեկ պատկերազարդ փո- քր ոսկ .	17	10
Նարեկ մեծադիր .	8	5
Սաղմոս բազմապատկեր փոքր .	8	4
Առաջնորդ անգղ. լեզուի .	10	6
Գեղազրութիւն Հայկական :	5	5
Գինել ուղղութեամբ պէտք է դիմեն մեր գրատունն Յակոբեան խան թիւ 13 : Գա- ւառներէն յանձնարարութիւնք կ'ընդուն- ուին պայմանաւ որ 50 դրչի գումարէ պակաս չը լինին :		
Գ. ՊԱՂՏԱՏԼԵԱՆ		

ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՅՑԵՏՈՄՄԻ

Հաւագոյն քառթօնի վրայ ա-
մէն լեզու աւեր պատրաստուի
ի գին 100 հատը 10 դհէկն .

պէտք ունեցողները պէտք է
դիմեն Գ. Պաղտատեան տը-
պարան Յակոբեան խան
թիւ 13 Կ. Պոլիս :

ԲԱՐԻՉ ՖԱՃԻԱԼԱՐԸ

Քսաւիէ տը Մօնթէրէնին թէլիֆ-
բէրտէլէրինտէն Բարիզ Ֆաճիալարը
նամ մէջհուր բօմանըն՝ պու տէֆա
Պիպէրեան կարապետ էֆէնտի թա-
րափընտան նէշրինէ միւպաշէրէթ օլը-
նըպ, պիրինճի ճիւտի տախի բունու-
մայի զուհուր էթմիշ տիր վէ իքինճի
ճիւտինին նէշրինէ տախի պէտ օլուն-
մուշ տըր :

Իշպու դայէթ ճալիպ բօման տէօրթ
ճիւտտէն իպարէթ օլունպ ապօնէ եա-
զըլմաք իսթէյէնլէր, Ստանպու իշին
այտա 5 վէ թաշրալար իշին 6 զուրուշ
վէրէճէր տիրէր :

Պիպէրեան էֆէնտինին պունտան
ազտէմ նէշր իթտիկի էթմէքճի Գա-
տըն նամ մէջհուր բօմանըն ինզիմա-

մընա սարֆ իթտիկի սայ ու դայրէթ
մալիւմ օլունպ, իշպու եէնի թէշէպ-
պիւսիւնտէ տախի պիր գաթ տահա
էհլի քիթապէթէ պիր սուհուլէթ օլ-
մաք իւզրէ, Բումէլի թիմուր եօլէթ-
համարընտան տարաք, գուրասը ի-
սապէթ իթտիկինտէ ապօնէլէրէ թէվ-
զի օլունաճաք տըր . նասըլ քի իլը տէ-
ֆապընտա տէօրթ եիւզ ֆրանք ըս
իւլ մալին գուրասը իսապէթ խոուպ,
պու բարա իլէ եինէ չրմէնտըֆէր էս.
համը ալմըշ տըր :

Ապօնէ եաղըլմաք իսթէյէնլէր ըՍ-
թանպօլտա Պահճէ գաբուսունտա սու-
ճու Պօղսս վէ Յակոբ աղալարա վէ ճէ-
միի դաղէթա միւվէզզիլէրինէ միւրա-
ճաւթ իթտիլէրինտէ պէհէր նիւս-
խէլէրի վազթինտէ քէնտիլէրէ կէօն-
տէրիլէճէր տիր :

ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

ԱՆՏՕՆ ՍԱՔԱՆԱՆ

ԽՄԲԱԳԻՐ Յ. Մ. ՀԱՃԵԱՆ

— 6 —

Թայ . բայդ իրեք օր մեռո՞ւ ուրիշ նամակէ մը
կիմանայ թէ մեռեր է . ահա այն ատենէն ,
թաղեցիք՝ որովհետեւ անունը չը գիտէին այս
տիկնոջ , Գեղանի Որբեւայրի մականունը կու-
տան իրեն : Ահաւասիկ ինչ որ գիտեն գրացի-
ներն այս տիկնոջ նկատմամբ , իսկ բուն եղբ-
լուծեան մասին առաւօտուն արդէն Սիսիանի
յայտարարութիւնը գրի առիք :

— Այո, այո, արդէն ամեն ինչ կապացու-
ցանքն թէ մարդասպանը նոյն իսկ տիկնոջ եղ-
բայրը՝ այդ Սիսիանն է :

— Նիյազի էֆէնտի ըսաւ մաքուր հազ-
ուած պարոնը , խնդրեմ պատմեցէք ինձ այս
դէպքին մանրամասնութիւնները :

— Երկու խօսքով բացատրեմ գործը , ա-
ռաւօտեան ժամն իննին միջոցներն , տան մէջ
մեծ աղմուկ մը կը լսուի և մի քանի ապակի-
ներ կը խորտակին հինգ վայրկեան վերջը , ըս-
պանեալ տիկնոջ եղբայրը Սիսիան , տան դու-
ռը բանալով կսկսի օգնութիւն պօռալ , մի քա-
նի դրացիներ հասնելով , գործին ինչ ըլլալը
կը հարցնեն , որոնց կը պատասխանէ թէ վերի
խոցը կը պառկէր ինքը . սոսկալի աղմուկէ մը
արթննալով , անմիջապէս քրօջը խոցը վաղեր
է որուն դրան առջին դիմակաւոր մէկու մը
զարնուեր է որ աճապարանօք խոյս կուտայ
եղեր , գող կարծելով զայն բռնելու աչխա-

— 7 —

տէր է . սակայն գողը յաջողեր է նախապէս
պարտէզին պատին դրած սանդուղէն ելնելով,
պատին կատարէն փողոցը ցաթկել՝ պարտէզը
թողլով իւր վերարկուն . Սիսիան յետոյ ետ
դառնալով , կը տեսնէ թէ իւր քոյրը ձեղու-
նէն կախեր են , այն ժամանակ անմիջապէս
փողոց ելնելով օգնութեան կը կոչէ զդրացիս :

Ինչպէս յայտնի կերելի , դիմակաւոր մար-
դուն պատմութիւնը կըրիկ սուտ մ'է . ասկէ
զատ այդ երեւակայական դիմակաւորին թո-
ղած վերարկուն , նոյն իսկ երկու ամիս առաջ
Խտալիոյ մէջ մեռնող քեւայրւոյն վերարկուն
ըլլալը կը պնդէ :

— Զարմանալի բան , ուրեմն մարդասպա-
նը խոյս տուած միջոցին կնոջ ամուսնոյն աստ
մնացած վերարկուն հետը տանել ուզեր է :

— Ահա այդ մասին կը սխալիք , Սիսիան
կը պնդէ թէ քեւայրը այդ վերարկուն հետը
Խտալիա տարած էր :

— Շիտակն ըսելով , կատարեալ հանելուկ
մ'է այդ , ուրեմն ինչպէս կըլլայ որ վերար-
կուն այժմ Պօլիս կը գտնուի . այս գործին
մէջ գաղտնիք մը կայ ըսաւ պարոնը խոհուն
դէմքով մը , յետոյ յարեց , այս երախան ինչ
պիտի ընէք հիմայ :

— Հիմայ անմիջապէս Հայոց Պատրիար-
քարանը պիտի ղրկեմ :